

պուլած են: Վորքա այնտեղ ոչ միայն իրանց ազգային միութեան կեդրոնն ունին, այլ և կրօնական: Այս կեդրոնը, Նշմիածնի Պատրիարքարանը (Վեհաբան, Վաթուղիկոսարան)՝ մի ճշմարիտ մոզիչ ոյժով կնգդէ ամենի վերայ: Հայերը ամենախորին հաւատարմութեամբ և անխախտ պահեցին իրանց հայրենիքը, իրանց լեզուն, իրանց բարքը, Վրիստոնեութիւնը և նորա ազգային ու եկեղեցական կերպաւորութիւնը:

«Նշթէ Ռուսաստան իր տիեզերապատմական առաքելութիւնը (միսիօն) ուղիղ ըմբռնէ, այն ժամանակընա հայերին այն կը շնորհէ, դէպ ի որ երկար ժամանակներից սկսած նոցա կարօտը կը ձգտի, այն է հրա-նային: Ռուսաստան հէնց այն պատ-

ճառաւ կարօղ է Հայերին ազատ թոյլ տալ իրանց ներքին գործքերի մը, մանաւանդ մտաւոր յառաջագիտութեան, որովհետեւ նա Հայերի ամեն յարաբերութեամբ դէպ ի Ռուսաստանն ունեցած յօժարութեան վերայ՝ կատարեալ ապահով լինել կարօղ է: Թաթարները իրրե Մահմետական՝ քիչ թէ շատ Ռուսաստանի առաջին կասկածաւոր կ'երեւան: Այնինչ Հայերը Ռուսաստանից ճշմարիտ և իրաւամբ շնորհակալ են. նա ազատեց նոցա մի անտանելի կորացուցիչ ստրկութիւնից, որի տակ հէնց այն ակնթարթին կրկին ընկնել կարօղ են երբ Ռուսաստան իր զօրաւոր ձեռքը նոցա վրից վերառնէ:

(Մեղեմի էջերէն:)

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Ա Ղ Ք Ա Տ Կ Ե Ա Ն Ք

(ՓՈՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ ԸՌԱԾ ՊՍՏԿԵՐ)

«Վո երեւիք իրարեւոյց ուրեւ ի հացը, մինչ քան նա դէպ ի հող, որից առաջ է», Օ՛ննոր. Գ. 19:

Սակզճող Տէր՝ խոր և անհաս զարմանալի է Վո զործ, Ջուր է քննում մտածելով մահկանացուն բազմափորձ, Թող նա մաշէ զիշեր ցերեկ Վո զործերով զբազլած Վերջում զուխը խոնարհած կասէ. ,,Տէր փառք քեզ Աստուած,,:

Գողան երկինք, սարսափեցին ողջ արարածք հիացած Իսկ մարդկութեան համար հասաւ քանի տխուր սուղ ու լայ,

(Ա՛խ, դա՛ռն ժամ՝, տխուր րոպէ, անտանելի՛ սեւա վայրկեանն)
Երբ հաստատվեց կնքվեց անգարձ վերջին վիճակ մարդկութեան:

Խորհրդաւոր բառեր լավեց՝ ,մարդ հողեղէն այսուհետ՝
Աշխատութիւն, հող, ցաւ ու լաց լինեն կեանքիդ կարապետ.
Քո քրտունքի դառն հոսանքներ զնան թափվեն անընդհատ,
Երբ կմտնես հողի արգանդ թո՛ղ վերջանայ քո գանդատ:,,

Հաստատվեցաւ, կատարվումէ երկնահրաման այս վճիռ,
Որ լսեցին պատկառանքով անհուն երկինք և երկիր.
Ո՛չ լայնութիւն Ավիեան դաշտի և ո՛չ Ալպեան սէզ կատար
Չկարացան այս մեծ վճուին տալ խոչնդոտ և դադար:

Ահա յիշում եմ ես կրկին այն դառն կեանքի մութ պատկեր,
Որ թողեցին միշտ յաւիտեան իմ հոգուս մէջ խոր հետքեր.
Նորա սկզբից ես մինչև վերջ ականատես և վկայ,
Ա՛խ նա կեանք չէր, այլ չարաբարդ տանջանքի զոհ անխնայ:

Քայլ չգրած աշխարհի մէջ մանուկ իւր մօր արգանդում,
Մահը փակեց նորա հօրը գերեզմանի մութ բանդում.
Մտաւ աշխարհ չունենալով նա իւր կեանքի բուն պառձառ,
Երբ և փչեց մի փոքրիկ հողմ՝ տարուբերեց անդադար:

Իսկ ո՞վ կարող է ուրանալ, թէ մանուկ կեանքը մատաղ
Չունենալով դատարակ, կրթութիւնից միշտ անկախ
Պէտք է զնայ, յամառանայ, բարք ու վարքով խանդարված՝
Նա մանաւանդ եթէ լինի չար մարդիկով պաշարված:

Դեռ չէր քամել սա իւր բաղդի ողջ դառնութեան սեւ բաժակ
Պէտք էր զնար թշուառանար հետ զհետէ այս վիճակ.
Դեռ շատ չանցաւ որբացաւ նա և խղճալի իւր մօրից,
Ծնողք ոչինչ չթողեցին բաց ի այս նեղ սեւ օրից:

Օղբ զգուեց միշտ կրկնելով սորա սուգի արձագանդ,
Մարդիկ միայն ասում էին, ա՛խ խ խղճալի հանգամանք.
,,Ի՞նչ թողեցին սորա ծնողք, սորա համար թշուառ կեանք.
,,Թշուառ կեանքը կարծեմ ուղիղ պէտք է ասել խիստ տանջանք:,,

Ոտաբոսիկ, պատառ պատառ հանգերձներով փաթաթված,
Երևում էր փողոցներում այս խեղճ մանկիկ որբացած՝
Սովից, ցրտից, մերկութիւնից նա միասին պաշարված
Գնաց մտաւ ծառայի տեղ՝ որ ձեռք բերէ կոտոր հայ:

Հանդիպելով մի խիստ տիրոջ, մի բռնաւոր տիրանի

Մահով կեանքից բաժանվողին տամբ հազար երանի .

Յուսահատված նա յանձն առաւ մնայ սոված մեռանի՝

Քան ծառայի մի այսպիսի մարդանման զաղանի :

Նա փորձ փորձեց վաղել խնդրել երկրի ծոցից օգնութիւն,

Հերկել, վարել և սերմանել աշխատելով աննկուն .

Եթէ մարդիկ զլանում են կարեկցութիւն ինձ ցոյց տալ ,

Կարծեմ լաւ է բնութիւնից քան դռներից մուրանալ :

Երհամարհեց անձրև և ձիւն, տօթ նաև ցուրտ ձմեռներ,

Նա ծնվել էր մանկութիւնից կրել այս ծանր բեռներ .

Եյս դառնութեան աշխատանքով միշտ քրախնքով ողորված

Կարողացաւ մերկ չերևել դանել միայն ջուր և հաց :

Չանձրանալով այս նեղ օրից կարծեց օգնել իւր կեանքին,

Կեանքին ընկեր յաւելացրեց մի օգնական ամուսին,

„Թող միասին քաշենք տանենք մեր խիստ բազրի դառն լուծ

„Քեզ էլ կտայ մեր Ստեղծիչ հաց՝ ջուր և միշտ դժուծ : „

Բաժին հասաւ սորան մի կին տղեղ մարմնով և հոգևով

Եյսպիսուց հետ կեանք վայելել կարծեմ կարող չէ ոչով .

Լռենք այստեղ զերդաստանի ամեն օրվայ նեղութիւն .

Եյսպէս կեանքից հեշտ է ընտրել լեղիի հետ մահաթոյն :

Ամուսնութիւն պտուղ բերեց թշուառութեան զաւակներ,

(Չեմ մոռանում այս տեղ յիշել այն ձախողակ միջոցներ,

Եթէ խնդրեն փափագելով հարուստ ծնողք մի զաւակ,

Չէ կատարվում, իսկ աղքատին բոլորովին հակառակ :)

Մութ խրճիթում ցուրտ օդի մէջ քաղցած անմեղ մանուկներ

Գոռում էին դողդողալով . իսկ աղքատիկ ծնողներ

Համարելով միմեանց պատճառ թշուառութեան, կռվելով՝

Երկրի ծոցից խնդրումէին իւրեանց անունդ քրտնելով :

Վերագարձած այն խիստ դործից մայրը անբաղդ զաւակաց

Տաքացնում էր շունչ փչելով նորանց ձեռներ ցրտացած,

Գառն վաստակով ձեռք բերելով իւրեանց համար կտոր հաց՝

Ուտում էին այն շատ անգամ մէջ բերելով սուղ ու լաց :

Շատ օր չանցաւ նախանձվեցաւ սպառում բազդ և սորան

Ենհետացաւ առողջութիւն այս խեղձ՝ մարդից յաւիտեան .

Բայ խրճիթում գեանի վերայ դրված էր խեղճը հիւանդ
Յաւի անգութ սաստկութիւնը կեանքը արեց քար ու քանդ:

Մահու մկրատը տեսնելով մօտենում է անարգել,
Որ հատանէ վճռողապէս իւր սեաւ կեանքի վերջին թել.
Ողորմելին փորձեց շարժել նուազ լեզուն իւր կարկամ
Եսել զոնէ մին քանի խօսք զաւակներին անխնամ:

„Հասաւ օրը՝ հեռանում է ձեր անբաղդ հայր ձեզանից,
Չեղ երկնքում ունէք այլ Հայր, հաց խնդրեցէք նորանից.
Ես հայր թշուառ, ես տարարաղդ աշխարհի մէջ յաւիտեան,
Նա ձեր Ստեղծող և Խնամարիւ, Նա է աղբիւր բարութեան:

“Յանկանում եմ ձեզ կեանք բարի, խաղաղութեան օրեր շատ.
Թէ շատ թէ փոքր մնաք երկրում ապրէք ուրախ անշանգատ.
Հայր Արարիչ, վերջին իմ շունչս պարգելով զէպի Վեղ
Եղաչում եմ իմ զաւակներ չլինեն անբաղդ ինչպէս ես:”

Նա համբուրեց արտասուէքով, գրկեց որդիքը Դշուառ
Որոնց պէտք է թողնէր գնար անպատասպար մերկ անձար.
Ինքը ժառանգ աղքատ կեանքի՝ նոյնը թողեց և որդւոց
Թշուառութիւն և նորա հետ միշտ անբաժան լաց ու կոծ:

Վերջին ջերմ շունչը չքաղված, քանի վայրկեան մնացած,
Երբ որ կեանքի անգին պարզեւ մահով պէտք էր դնել ցած,
Մտարերեց ամբողջ իւր կեանք մութ ըսպէից ծննդեան,
Խոր ա՛ խ հանեց աւեր կուրծքից, այսպէս բացեց իւր բերան:

„Իմ Ստեղծող Տէր, անհաս է Վո խորհուրդները և Վո զործ՝
„Ո՛չ միայն ինձ, և հանձարեղ մահկանացւաց բազմափորձ.
„Ո՛վ կամենում է՝ թող քննէ զիշեր ցերեկ զբաղված,
„Վերջում խոնարհ և հեղ հոգւով կրկրկնէ „փառք քեզ Աստուած:”

„Պու ծածկաղէտ, ամենաղէտ, Վեղ յայտնի է սկզբից
„Իմ ծննդեան կամ գոյութեան չքանալի ըսպէից.
„Մինչև այս կէտ չկարացի ուրախ սրտով և հոգւով
„Վոնէ՛ մի օր թշուառ կեանքս թողնել ազատ աննզով:

„Վո խնամքը ողջ մահացուք վայելում են հաւասար,
„Երև անձրև տեսնում են շատ մեղաւոր և արդար,
„Վո բարկութեան արդար անէճք Տէր իմ վերայ ծանրացան
„Ողջ կեանքիս մէջ և ինձ հետը կիտանեն զերեզման:

- 11 Ես, իմ մանկունք բոկիկ ոտով պատառատուն զգեստով
- 11 Միշտ կրեցինք սովբարար քաղց ու ծարաւ մերկ ու սով.
- 11 Իսկ միւսները՝ լիացած վայելում են պատիւ փառք,
- 11 Ոտով զնալ չեն կամենում, նորանց տանում են միշտ փառք:
- 11 Սովորական չունենք մեք հաց, չունենք հանդերձ մի խոշոր,
- 11 Որով տայինք մեր մերկութեան յարմարութիւն կարևոր.
- 11 Նորանք՝ անչափ զեղխութեան միջ վատնեն ոսկի և արծաթ՝
- 11 Ամենայն օր մի նոր հանդերձ, և այս նորանց դեռ չէ շատ:
- 11 Նորանց մանկունք լիութեան միջ, կրթութենով զարդարված,
- 11 Իմ զաւակներ յառաջ և այժմ աղքատութեամբ պաշարված՝
- 11 Մեր նախահօր պատուհասին հաղորդվեցանք մեք միայն՝
- 11 Կառանգարար միշտ տանելով աղքատութեան խիստ շղթան:
- 11 Քո գործերը դատել կշռել՝ 11 մեղայ քեզ 11 ինձ չէ յարմար,
- 11 Եւ այն միջոց՝ երբ լինումէ շնչիս վերջին տուր և սոս,
- 11 Մի բաժակ ջուր իմ բերանին դեռ չեն տուած. կան մարդիկ,
- 11 Նորանց փափուկ նուրբ ձեռերին այս դժուար գործ է սաստիկ:
- 11 Բայց ես կեանքիս միջ չունեցայ զոնէ՝ ազատ մի վայրկեան,
- 11 Չհասկացած թէ ի՞նչ է կեանք, աչքիս առաջ օր մահուան.
- 11 Գառն քրտունքը երեսիս մաշեցին իմ կեանքիս ամբ,
- 11 Իսկ եթէ այս Քո հրաման է, օրհնած լինի Տէր Քո կամբ: 11

Մութ աչքերից գլորվեցան խոշոր խոշոր արտասուք,
 Ընբաւական մի ա՛խ քարշեց հիւանդ աղքատը խղճուկ.
 Երեք անգամ շնչեց երկար. խորհրդաւոր սուրբ վայրկեան.
 Եզնիւ հոգին թռաւ, թողեց թշուառ մարմնի օթեան:

Ստեղծող Տէր՝ խոր և անհաս զարմանալի է քո գործ,
 Օճուր է քննում մտածելով մահկանացուն բազմափորձ.
 Թող նա մաշէ զիշեր ցերեկ քո գործերով զբաղված,
 Վերջում գլուխը խոնարհած կասէ՝ 11 Տէր փառք քեզ Աստուած: 11

Մելիտեդեի Քահանայ Քալանիարեանց:

Ղևորական: